

ԲՆԱԿԵԼԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՍՊՐՎՈՂ ՀԻՓՈԹԵԶԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Վարկերի տրամադրման աշխարհագրական շրջանակը	Հայաստանի Հանրապետություն
Վարկառու/Գրավատու	21 տարին լրացած ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, ովքեր վարկի գործողության ողջ ընթացքում չեն բոլորի կենսաթոշակային տարիքը
Վարկառուի վարկային պատմության հանդեպ պահանջներ	1. Գործող վարկը չպետք է լինի ժամկետանց վարկային պատմության ստուգման պահին 2. Ժամկետանց օրերի քանակը բոլոր վարկերի գծով վերջին 12 ամիսների ընթացքում չպետք է գերազանցի 30 օրացուցային օրը
Աշխատանքային փորձ	1. 6 ամիս չընդհատված աշխատանքային փորձ վերջին աշխատանքային վայրում 2. Ընդհանուր աշխատանքային ստաժ՝ առնվազն 1 /մեկ/ տարի
Տրամադրվող գումարի մեծությունը	նվազագույնը՝ 1000000 AMD 3000 USD առավելագույնը՝ 20 000 000 AMD 50 000 USD
Կանխավճարը	սկսած՝ 30% -ից
Տարեկան անվանական տոկոսադրույքը	AMD՝ սկսած 10%-ից մինչև 24% USD՝ սկսած 10%-ից մինչև 24%
Վարկի ժամկետը	մինչև 10 տարի
Մարման եղանակ	Ըստ հաճախորդի ընտրության՝ անուիտետային վճարումներ, կամ վարկի գումարի հավասարաչափ մարում գումարած վարկի մնացորդի վրա հաշվարկված տոկոսները (գսպանակաձև մարում)
Տոկոսագումարի հաշվարկման և վճարման կարգը	Տոկոսագումարի հաշվարկը կատարվում է վարկի նվազող մնացորդի նկատմամբ օրական կտրվածքով և ենթակա է վճարման ամսական պարբերականությամբ
Վարկի դիմում-հայտի ուսումնասիրության վճար*	7.000 ՀՀ դրամ

Վարկի գումարի տրամադրման միջնորդավճար	Տրամադրվող գումարի 0-2%-ի չափով
Վարկի սպասարկման վճար	Ամսական` 2000 ՀՀ դրամ
Վարկառուի այլ ծախսերը	Վարկի տրամադրման հետ կապված ՀՀ օրենսդրությամբ սահմանված ծախսերը(այդ թվում` նոտարական վավերացման, պետական գրանցման, ապահովագրական և այլն)
Վարկային պարտավորությունների կատարման ապահովման միջոցները	Ձեռք բերվող անշարժ գույք, այլ գրավ, երաշխիք, երաշխավորություն, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այլ եղանակներ
Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետը	1 աշխատանքային օր` անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո
Ժամկետանց վարկի գումարի գծով հաշվարկվող տույժ	0.13% չափով տույժ ժամկետանց վարկի մայր գումարի նկատմամբ` ամեն ժամկետանց օրվա համար
Ժամկետանց տոկոսագումարի գծով հաշվարկվող տույժ	0.13% չափով տույժ ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ` ամեն ժամկետանց օրվա համար
Անշարժ գույքի շուկայական և լուծարային արժեքի գնահատում	Ընկերության հետ համագործակցող լիցենզավորված գնահատող կազմակերպության կողմից
Անշարժ գույքի ապահովագրություն	Չի կատարվում